

ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՏՐԱՎԵՐՆԵՐ*

ՓՈՂՔՐ, ԹԵ՛ՆԱՎԱՍԱՐ

«Ես եւ իմ հայրը մի ենք»:

Նովհ. Ժ. 30

Ս. Գրքի մեկնության եւ այն հասկանալու համար բրուկլինյան կազմակերպությունը հերքում է միայն եւ միայն իրենց իսկ մշակած սկզբունքներին՝ մերժելով այլ փեսակերները եւ սկզբունքները: Եւ այդ ամենը նրանք ներկայացնում են որպես միակ ճշմարիտ, ինչպես իրենք են ասում՝ հիմնված միայն Ս. Գրքի վրա: Նշենք, որ այդպես են ասում այսօր գոյություն ունեցող բոլոր՝ հազարավոր աղանդավորական շարժումները: Այլ կերպ ասած sola scriptura-ն հանգեց նրան, որ բոլորը եղան ճիշտ, բոլորի համար միակ վստահելի աղբյուրը Ս. Գիրքն է, բոլորի համար Ս. Գիրքը հասկանալի է միայն իրենց մոտ եւ իրենց մեջ: Ավելին. Գ. դարի Կիպրիանոս Կաթագենացու **extra Ecclesiam nulla salus** սկզբունքն էլ միայն իրենց վերագրելով՝ Ընդհանրական եկեղեցին համարվեց մոլորված եւ Աստուծոց մերժված:

Բրուկլինյան կազմակերպության դիպարանները այդ առումով անգերազանցելի են: Եեովայի վկաների համար մրաժել, խորհել, քննել այս կամ այն հարցը, որեւէ խնդիր լուծել՝ անիրական է, նրանք այդ ամենի պարասխանը գիտեն (եւ գրնում են) երկշաբաթյա այդ ամսագրերում, որոնց նպատակն էլ հենց այդ է, բրուկլինյան հզոր մեքենայի ուսմունքն ու կարեւորությունը ներկայացնել այնպես, որ ոչ մեկի մրքով այլ բան չանցնի, այլ միայն այն, ինչ ուզում են իրենք: Սա ժամանակակից հոգևոր սրբկության ամենահաջողված մոդելն է.

«Եեովա Աստվածը օգնություն է ցույց տալիս Իր ներշնչյալ Խոսքի միջոցով, Իր սուրբ հոգու միջոցով եւ Իր փեսաների կազմակերպության միջոցով»,
- հստակեցնում է Դիպարանը²:

Սա նշանակում է, որ մի կազմակերպություն, մարդկանց մի խումբ, եւ միայն իրենք ներկայացնում են Աստծուն եւ խոսում Նրա անունից: Եւ եթե այդպես է, ուրեմն այդ կազ-

*Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Ե.:

2 Դիպարան, 15.02.1991, էջ 29: Նշենք, որ այսօրեղ «սուրբ հոգի» գրությունը սխալմունք չէ, քանի որ Եեովայի վկաների դավանանքով Ս. Հոգի գոյություն չունի, առկա է միայն «սուրբ հոգի» - Եեովայի գոյություն, գործուն ուժ իմաստով:

մակերպության անդամները՝ Եհովայի վկաները, մի նպատակ ունեն՝ ապրել, մրաժել, գործել այնպես, ինչպես թելադրում է Դիպարանը: Նկատենք, որ այդ ուղեցույցը Դիպարանն է, եւ ոչ թե՛ Ս. Գիրքը, թեև նրանք՝ վկաները, պնդում են, որ դա նույն բանն է: Նենց սա էլ կոչվում է հոգևոր սպրկություն:

Շատ կարևոր է այս հարցը քննելիս հիշել Գործքում նկարագրված Պողոս Առաքյալի քարոզության դրվագը Բերիայում.

«Բայց եղբայրները գիշերով շրտալ ճանապարհ դրեցին դեպի Բերիա Պողոսին եւ Շիդային, որոնք, երբ այնտեղ հասան, գնացին հրեաների ժողովարանը, քանի որ սրանք ավելի ազնիվ մարդիկ էին, քան թե Թեսսաղոնիկեում եղածները: Սրանք ամենայն հոժարությամբ ընդունեցին խոսքը, ամբողջ ժամանակ քննում էին գրվածքները՝ խմանալու, թե այդ բաները այդպե՛ս են»³ (Գործք. ԺԷ. 10-11):

Այսինքն՝ Բերիայի քրիստոնյաները Պողոս Առաքյալի խոսքերը լսում էին, ընդունում, բայց միաժամանակ նաև քննում էին Գրքերը, այսինքն՝ Նին Կրակարանը⁴, համոզվելու՝ Առաքյալի ասածները համապատասխանո՞ւմ են արդյոք գրվածքներին:

Բրուկլինյան կազմակերպությունը, անշուշտ, լավ գիտակցում է, որ իրենց մոտ էլ կարող են գրնվել «Բերիացիներ», որոնք փորձեն քննել Դիպարանի պնդումները: Նախահարձակության սկզբունքը Դիպարանի ռազմավարության հիմնական առանցքն է. Դիպարաններում նյութերը այնպես են փեղադրված ու կազմած, որ ընթերցողի մեջ ենթադրաբար առաջացած հարցերն անգամ սրանում են իրենց պատասխանները: Այդ էլ բացառում է, որ նրանց մեջ գրնվեն «բերիացիներ»:

«Որպեսզի ավելի հաջողությամբ փառաբանվի Եհովայի անունը, մեզ համար անհրաժեշտ է ավելի ու ավելի օգտագործել քրիստոնեական հրապարակումները, որոնք ներկայացնում է Եհովա Աստվածը օձյալ «հավատարիմ ու խնաստուն ծառայի» միջոցով (Մարթ. ԻԴ. 45-47)»⁵:

Նամանակն քրուկլինյան կազմակերպության, ուրեմն, «հավատարիմ ու խնաստուն ծառա»-ն այն «օձյալ» ծերունիների խումբն է, որը ղեկավարում է կազմակերպությունը: Այս է պարզապես, որ այդ կազմակերպության անդամները Դիպարանից դուրս այլ գրականություն չեն օգտագործում, չեն քննարկում: Անգամ Դիպարանում առկա հակասությունները նրանց համար սխալ չեն:

«...Սուրբ հոգին առաջին քրիստոնյաներին ուղղորդեց գործել միասին, որպես «հավատարիմ ու խնաստուն ծառա», որպեսզի առանձին օձյալ քրիստոնյաներին «իր ժամին կերակուր տան»⁶:

«Այսինքն այսօր ամբողջ աշխարհին՝ մարդկությանը, կերակուր տալու համար Աստված ընտրել է այդ կազմակերպությունը կամ «հավատարիմ ու

3 Ընդգծումը մերն է - Ղ. ք. Մ.:

4 Այդ ժամանակ դեռ Նոր Կրակարանի կանոնը չկար, եւ «Գրքեր» ասելով հասկանում էին Նին Կրակարանի գրքերը:

5 Դիպարան, 15. 09. 1994, էջ 12:

6 Դիպարան, 01.02.2002, էջ 19-20:

խնասիրուն ծառային»՝ օձյալների խորհրդին: Այդ ղեկավարների միջոցով էլ մեր Առաջնորդը՝ Տիսուս, հասուն եղբայրների փեղակալն ժողովներում ավագներ է նշանակում, անկախ նրանից օձյալ են նրանք թե՛ ոչ... Պատասխանատու եղբայրները սրանում են ցուցումներ Ղեկավար խորհրդից և պարտաստակամությամբ հովվում են հոբոր կամ ժողովը: Այսպիսով Բրիսպոս այսօր մեզ հեղ է և ակտիվորեն ղեկավարում է մեր հավաքները»⁷:

«Եհովայի շահերի պաշտպանը երկրի վրա «հավաքարիւմ ու խնասիրուն ծառան» է, որը Եհովայի վկաների Ղեկավար խորհուրդն է»⁸:

Այսպիսով մնում է միայն ենթադրել, որ այդ ինքնակոչ «հավաքարիւմ ու խնասիրուն ծառան» իրեն հոգակում է միակն ու միակը՝ Աստծու և աշխարհի գործերում և այդ քարոզության իրականացումը կատարում է կազմակերպության անդամների միջոցով:

Ինքնակոչության այդ սկզբունքը բրուկլինյան կազմակերպության գործունեության բոլոր ոլորտներում առկա է. ամեն դրական վերագրում են իրենց, իսկ մնացյալը՝ սապանային: Անգամ նրանց վերջին ինքնաանվանումը («Եհովայի վկաներ») այդ է ցույց տալիս:

Եսայի ԽԳ. 10-ից ելնելով նրանք սեփականացրին «Եղեք ինձ համար վկաներ» հարվածը և հոգակեցին, որ այդ վկաները հենց իրենք են: Մինչդեռ կոնտրեստից պարզորոշ հասկանալի է, թե ովքեր են այդ վկաները. Իսրայելը, որ պետք է իր առաքելությունը կատարեր հեթանոսների և շրջապատող ազգերի մեջ: Այսինքն՝ նույն «ինքնակոչության» սկզբունքն է, որ վերագրել են իրենց այսօրվա վկաները, ավելի ճիշտ՝ բրուկլինյան կազմակերպության անդամները:

Բրուկլինյան կազմակերպության հեգեմոն դիրքը և անսխալականությունը ցայտուն կերպով արտահայտվում է նրանց անդամների քարոզներում, զանազան հարցերի վերաբերյալ փեսակերպերում և այլուր: Նրանց դավանած սկզբունքները պարզապես են բոլորի համար որպես դոգմա՝ սկզբունք, անվերապահ պետք է ընդունվեն անդամների կողմից, որոնք ի միջի այլոց ավելի «կաթոլիկ են, քան Նոմի պապը»:

Այսպես, նրանց դավանանքի համաձայն Տիսուս Բրիսպոս Աստված չէ, և Նորից փոքր է, ստորադաս: Այս փեսակերպը պաշտպանելու համար բերում են մի շարք սուրբգրային համարներ, որոնք, իբր հիմնավորում են իրենց ասածը: Նաճախ շահարկում են Նովի. ԺԴ. 28, Միքիա Ե. 2 համարները:

1) Նովի. ԺԴ. 28

«Ասեցիք, որ ձեզ ասացի, թե՛ գնում եմ և կգամ ձեզ մոտ. եթե ինձ սիրեիր, ապա դուք ուրախ պիտի լինեիր, որ ես Նոր մոտ եմ գնում, որովհետև իմ Նայրը մեծ է, քան ես»:

Մեր հայրերի և փայլերի եկեղեցիների մեկնիչների կողմից այս հարվածը մեկնաբանվում է այսպես. Տիսուս աշակերտներին բացատրում է, թե ինչու իրենք՝ աշակերտները, պետք է ուրախ լինեն Տիսուսի՝ Նոր մոտ՝ երկինք գնալու համար: «Տիսուս

⁷ Դիսպարան, 15.03.2002, էջ 14:

⁸ Դիսպարան, 15.01.2001, էջ 21:

մարդ եղավ և դրա համար էլ Նորր իրենից մեծ է ասում»⁹, բայց բնությամբ հավասար է Նորր և համագոյ է նրան, «որովհետև Նայրական էությունից է ծնված»¹⁰:

Իսկ Ս. Գրիգոր Տաթևացու՝ այդ համարի մեկնությունն ավելի հստակ է. «*զի ըստ պատրանառի մեծ սաի Նայր քան զՈրդի, թէպէտ և ոչ բնութեամբ: ... զի յորժամ կամիցիս հարցանել, թէ ո՞րքան մեծ է Նայր, գործադրութիս ցուցանէ, թէ մեծ է քան զիս և ոչ այլ առասել*»¹¹:

Այսպեղ Ս. Գրիգոր Տաթևացին փարբերում է *մեծ* և *առասել* բառերը, հստակեցնելով, որ *մեծ* բառը վերաբերում է դիրքին և ոչ թե բնությանը, իսկ *առասել* բառը վերաբերում է արդեն բնությանը: Ստորև կրեսնենք, որ հենց այդ է արարահայտում հունարեն բնագիրը, Նովհ. ԺԴ. 28 և Եբր. Ա. 4 համարների համադրությունը:

Բրուկլինյան մեկնիչները Նովհ. ԺԴ. 28 համարը մեկնում են այսպես.

«*Եհովան մեծ է Նիսուսից ոչ միայն ըստ դիրքի, այլ նաև որպես դեմք: Եհովան մեծ է նաև Նիսուսից ըստ բնության*»¹²: Այսինքն Նիսուս փոքր լինելով Եհովայից, չի կարող լինել Նրան հավասար:

Այս փեսակերպ չի դիմանում քննադատության:

Նունարեն բնագիրն է.

ήκούσατε ὅτι ἐγὼ εἶπον ὑμῖν Ὑπάγω καὶ ἔρχομαι πρὸς ὑμᾶς εἰ ἡγαπᾶτέ με ἐχάρητε ἂν ὅτι εἶπον πορεύομαι πρὸς τὸν πατέρα ὅτι ὁ πατὴρ μου *μεῖζων* μου ἐστίν

Այսպեղ Նիսուս օգրագործում է *μεῖζων* բառը, որ հունարենում նշանակում է *մեծ* հենց այն իմաստով, ինչպես մեկնել են մեր հայերը, այսինքն՝ մեծ դիրքային համեմատությամբ, բայց ոչ բնության առումով: Վերջինիս իմաստով հունարենն ունի այլ բառ, որն օգրագործում է Պողոս Առաքյալը Եբր. Ա. 4 համարում, երբ համեմատում է Նիսուսին հրեշտակների հետ: Ի միջի այլոց այս համարն էլ Բրուկլինի համար «սիրածներից» է, քանի որ բացահայտքեն ժխտում է Նիսուսի հրեշտակ լինելու պարագան, այն, ինչ բարոզում են բրուկլինյան «օծյալները», և այդ սկզբունքը առանցքային նշանակություն ունի իրենց համար, քանի որ այդ դեպքում նրանց դավանական կերպերը Նիսուսի վերաբերյալ ի չիք է դառնում:

Ահա Եբր. Ա. 4-ի հունարենը.

τοσοῦτω *κρείττων* γενόμενος τῶν ἀγγέλων ὅσῳ διαφορώτερον παρ' αὐτοὺς κεκληρονόμηκεν ὄνομα.

Նայերեն թարգմանությունն է.

Նա այնչափ գերազանց եղավ հրեշտակներից, որ նրանցից շատ ավելի անուն ժառանգեց:

ՆԱԹ-ի թարգմանությունն է.

9 «Աթանաս Ալեքսանդրացու մատենագրությունը», Վենետիկ, 1899, էջ 55-56:

10 «Եթե իմ նկատմամբ ձեր սերը ճշմարիտ և հաստատուն է, պիտի ուրախանաք, որ Երկնավոր Նոր մարդ գնալով Նրա կամքը կատարած և Նրա հրամանը գործի դրած կլինեմ, ինչպես որ ամենքը պարտավոր են կատարել Մեծի հրամանը», - գրում է Օրմանյան պարբիարքը («Նամակապում», «273»):

11 Ս. Գրիգոր Տաթևացի, Մեկնություն Յովհաննու Անդարանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 569:

12 Թող Աստված լինի ճշմարիտ, Բրուկլին, 1946, էջ 200, անգլերեն:

Ուարի նա հրեշտակներից ավելի բարձր դիրք ունեցավ, այնքան բարձր, որ մի անուն ժառանգեց, որը նրանց անունից ավելի զերազանց է:

Պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ բրուկլինյան թարգմանիչները հունարենի մեջ հմուտ չեն, քանի որ սխալ են հասկացել *մեջ* ձևը և կրեթտոն բառերի իմաստային տարբերությունը կամ էլ միտումնավոր իրենց դավանանքն են արտացոլել այդ համարում: Իրոք, Եբր. Ա. 4-ում բնագիրը հուշում է և առաքյալի նպատակն էլ հենց այդ է. ցույց տալ Տիսուսի առավելությունը հրեշտակներից, նրանց՝ բնությամբ տարբեր լինելը: Այդ էլ արտահայտում է օգտագործելով կրեթտոն բառը, այսինքն, եթե Տիսուսն ունենար նույն բնությունը, ինչ ունեին հրեշտակները, Պողոս առաքյալը կօգտագործեր *մեջ* ձևը (մեծ) բառը, որը դիրքային մեծություն է արտահայտում և ոչ թե՛ կրեթտոն (առավել, զերազանց) բառը, որ բնության առավելությունն է ցույց տալիս: Մինչդեռ բրուկլինյան թարգմանությունը չի համապատասխանում հունարեն բնագրին, և արտահայտում է միայն իրենց դավանական սկզբունքը, այն է՝ Տիսուս հրեշտակների դասին պատկանելով դիրքի մեջ է բարձր և ոչ ավելին:

Ինչպես նշեցինք վերևում, այդ նույն սկզբունքն է արտահայտված Ս. Գրիգոր Տաթևացու բերած մեկնության մեջ. կարծես նա ձեռքի տակ ունեցել է Նոր Կրակարանի հունարեն բնագիրը և ճիշտ ձևով է բնկալել հունարեն *մեջ* ձևը և կրեթտոն բառերի տարբերությունը, ավելի ճիշտ քան այսօրվա բրուկլինյան խմբագիրները:

2) Միքիա Ե. 2

Այս համարն էլ հաճախ չարաշահում են բրուկլինյան թարգմանիչները՝ նրանում տեսնելով Տիսուսի աստվածությունը ժխտող փաստարկ: Իսկ համարի՝ անգամ մակերեսային բնությունը, հակառակն է ցույց տալիս:

Այսպես, մեր գրաբարն է.

«Եւ դո՛ւ Բեղդահեմ Եփրաթայ սակաւաւոր՝ իցե՛ն լինել ի հազարաւորս Յուդայ. ի քէ՛ն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի. և ելք նորա **ի սկզբանէ աւուրց աշխարհի**»:

ՆԱԹ-ի թարգմանությունն է.

«Եւ դու, ով Բեթլեհեմ Եփրաթա, շատ փոքր ես, որ Նուդայի հազարավորների մեջ լինես, սակայն քեզնից դուրս կգա նա, ով իշխան կլինի Իսրայելում ինձ համար, *որի ծագումը փաղեմի ժամանակներից է, հնամենի օրերից*¹³»:

Տրամաբանությունը կառուցված է այսպես. այդ իշխանը՝ Տիսուս, սկիզբ ունի, նա սկսել է գոյություն ունենալ ժամանակի ինչ-որ մի կետից, ուրեմն չի կարող լինել Եհովային հավասար, այսինքն՝ փոքր է, և եթե արդեն ժամանակի մեջ է նրա սկիզբը, ուրեմն՝ սրելով՝ ասելով է: Այսպիսով նրանք «*որի ծագումը*» բառերի մեջ տեսնում են Մեսիայի սրելովման, արարման գործողությունը:

¹³ Վերջին բառի վրա ՆԱԹ-ը եղում է տալիս՝ կամ՝ «դարերից ի վեր»:

«Աստուածաշունչը ասելի քան 700 տարի առաջուրե՛ն՝ քսած էր որ Սերունդին մարդկային ծնունդը պիտի ըլլար Բեթլեհեմի մէջ, բայց նաեւ յայտնած էր որ ան արդէն գոյութիւն ունէր «Էիմեն, յաւիտենական օրերէն»՝ երկնքի մէջ իր սրեղծուելէն ի վեր (Միքիա Ե. 2)»¹⁴:

«Որոշ գիտնականների հաշվարկների համաձայն, Տիեզերքը գոյություն ունի նվազագույնը 12 միլիարդ տարի¹⁵: Եթե այս հաշվարկները անգամ մասնակիորեն ճիշդ են, ապա Ադամի սրեղծումից առաջ միածին Աստծու Որդին շփվում էր իր Հոր հետ անթիվ անհամար դարեր եւ հազարամյակներ»¹⁶:

Բրուկլինյան խմբագիրները այնպես են վերաշարադրել Ս. Գիրքը, որ անգամ ցանկացած ակնարկ՝ Հիսուսի հավիտենական լինելու մասին, որպէսզ էլ որ հանդիպի, բացառվի:

Ահա անգլերէն *King James 2000 Bible* -ի համապատասխան համարը.

But you, Bethlehem Ephrathah, though you be little among the thousands of Judah, yet out of you shall he come forth unto me that is to be ruler in Israel; *whose goings forth have been from of old, from everlasting.*

Եթե համեմատենք հունարէն բնագրի¹⁷ հետ, ապա կրեանենք, որ այն հունարէնի ճշգրիտ թարգմանությունն է: Բայց այսպէս նրանց անհանգստացնում են *from everlasting*¹⁸ բառերը, որ նշանակում է ժամանակի սանդղակից դուրս: Այսինքն, LXX թարգմանիչները ճիշդ են թարգմանել եբրայերէն բնագիրը, որից երևում է, որ Մեսիան սրեղծված լինել չի կարող, նա դուրս է ժամանակից:

Այս թնջուկից դուրս գալու համար բրուկլինյան թարգմանիչները Միքիա Ե. 2-ի վերջին մասը ներկայացրել են այսպես.

“whose origin is from early times, from the days of time indefinite.” (Micah 5:2, NWT)

Այդպիսով հունարէն *αἰῶνος*=հավիտենական բառը դառնում է անորոշ *time indefinite*=ժամանակահատված, իսկ սա նշանակում է, որ ՆԱԹ-ը բացահայտւո՛րէն կեղծում է տրեսպիր, Միքիա Ե. 2-ը հարմարեցնելով իր դավանանքին:

Մյուս կողմից, ինչպէս կրեանենք ստորեւ, «*որի ծագումը վաղեմի ժամանակներից է, հնամենի օրերից*» հաղվածը մեկ այլ մարգարէի՝ Ամբակումի մարգարեության Ա. 12-ում էլ օգտագործված է նույն ձևով, ինչպէս բնագրում՝ եբրայերէնում, այն-

14 «Միացած՝ միակ ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքին մէջ», արեւմտահայերէն, 1988, էջ 31:

15 Նկարի ունի, հավանաբար, Մեծ պայթյունի փետությունից բխող այն կարծիքը, թե պայթյունը փեղի է ունեցել 12 միլիարդ տարի առաջ - Ղ. *philos. U.*:

16 Դիւրարան, 15. 02. 2000, էջ 11:

17 καὶ σὺ Βηθλεεμ οἶκος τοῦ Εφραθα ὀλιγοστός εἶ τοῦ εἶναι ἐν χιλιάσις Ἰουδα ἐκ σοῦ μοι ἐξελεύσεται τοῦ εἶναι εἰς ἄρχοντα ἐν τῷ Ἰσραὴλ καὶ αἱ ἑξοδοὶ αὐτοῦ ἀπ’ ἀρχῆς ἐξ ἡμερῶν αἰῶνος καὶ σὺ Βηθλεεμ οἶκος τοῦ Εφραθα ὀλιγοστός εἶ τοῦ εἶναι ἐν χιλιάσις Ἰουδα ἐκ σοῦ μοι ἐξελεύσεται τοῦ εἶναι εἰς ἄρχοντα ἐν τῷ Ἰσραὴλ καὶ αἱ ἑξοδοὶ αὐτοῦ ἀπ’ ἀρχῆς ἐξ ἡμερῶν αἰῶνος.

18 Դարեր ի վեր, հավիտենական դարերից:

պես և և հունարենում՝ LXX-ում¹⁹: Այս երկու համարների պարզ համեմատությունը ցույց է տալիս, որ Միքիան խոսում է Մեսիայի մասին, իսկ Ամբակումը՝ Աստուծո՛ւ Եհովայի, և երկուսն էլ օգտագործում են նույն բառերը: Այս երկու փոքր մարգարեները գրեթե ժամանակակիցներ են՝ VII-VI դդ. ն. Ք., և այդ նույն բառերը այդքան կարճ ժամանակահատվածում չէին կարող որակապես փոքրեր իմաստներ ունենալ: Իսկ սա նշանակում է, որ եթե Միքիայի մոտ Մեսիան սրբազան է, և նրան կարելի է սրբազանի ժամանակի սանդղակի մեջ, ապա նույն փրամաբանությամբ էլ Եհովային կարելի է համարել սրբազան էլ և «խցկել» ժամանակի սանդղակի մեջ, որն անշուշտ nonsense է²⁰:

Նշենք նաև, որ համեմատությունը եբրայերենի հետ գրեթե նույն արդյունքն է տալիս, ինչ համեմատությունը LXX հունարենի հետ:

Եբրայերեն **קֶדֶם** (kehdem) բառը թարգմանվում է *հեռում*, *նախնի դարերում*, և ոչ *անորոշ ժամանակներում*, իսկ **יְמֵי עוֹלָם** (imi oulawm) թարգմանվում է *հավիտենական օրերից*, որը LXX-ը թարգմանել է *ἀπ' ἀρχῆς ἕξ ἡμερῶν αἰῶνος* - **ի սկզբանէ աւուրց աշխարհի**: Այսինքն ՆԱԹ-ը կեղծում է բնագիրը և ներկայացնում իր դավաճանքի համեմատ թարգմանություն, և բացառում, թե հասկանալի լինելու համար է բնագիրը այդպես ներկայացրել, որն իրականությանը չի համապատասխանում:

Ավելին, եբրայերեն **מוֹטָאָו** (mo-tsaw-aw) բառը նշանակում է *հիշ*, և ոչ թե՛ *ծնունդ* կամ *սրբազան*, քանի որ արմատն է **מָצָא** բառը, որ նշանակում է *հիշ*, հունարեն *ἔξοδοι*:

Իսկ ինչ վերաբերում է *ծնունդ*, *սրբազան* բառերին, ապա հունարենն ունի *γενεσις*, իսկ եբրայերենը՝ **תולדת** բառը, որոնք այսպիսի չեն օգտագործվում, այսինքն, եթե LXX-ում Մեսիան ներկայանա որպես ծնունդ, սրբազան, ապա հունարենը և եբրայերենը կօգտագործեին հենց այդ բառերը:

Մեկ այլ հանգամանք էս կարելի է նշել. եբրայերեն **הַמָּצָא** բառը Միքիա Ե. 2-ում հոգնակի թվով է, որն էլ իր արտահայտությունն է գրել LXX-ի թարգմանության մեջ, ուր *ἔξοδοι*-ը հոգնակի թվով է: Անշուշտ զարմանալի չէ, որ նույն փաստն է արձանագրված նաև գրաբարում՝ *הַמָּצָא*, որն ունի հոգնակի *բ*-մասնիկը: Երբ որևէ գործողություն դրվում է հոգնակիով, նշանակում է որ այդ գործողությունը չի սրբազանվում ժամանակի մեջ, չունի ժամանակային չափ: Սա նշանակում է, որ այդ գործողությունը դուրս է ժամանակային սանդղակից, այդ *act*-ը չի կարելի մասնավորել, կոնկրետացնել: Այսինքն՝ այդ գործողությունը՝ *act*-ը, վերածվում է արստրակարի՝ վերացական հասկացության: Նկնց այդ էլ

19 οὐχὶ σὺ ἀπ' ἀρχῆς κύριε ὁ θεὸς ὁ ἄγιός μου καὶ οὐ μὴ ἀποθάνωμεν κύριε εἰς κρίμα τέταχας αὐτόν καὶ ἔπλασέν με τοῦ ἐλέγχειν παιδεῖν αὐτόν (Ամբակում Ա. 12):

Եբրայերեն է (Միքիա Ե. 2).

אֱתָהּ אֵתָהּ מִתְּחִלָּה, צִיר לְהוֹיֹת בְּאֶפְרַיִם, יְהוּדָה, מִמֶּנּוּ לִי יֵצֵא, לְהוֹיֹת מִשָּׁל בְּיָשָׁר; וּמִצָּדָתוֹ מִיָּמֵי עוֹלָם

և Ամբակում Ա. 12-ը.

וְהָיָה אֱתָהּ מִיָּמֵינוּ, יְהוּדָה אֶלֶּהִי קִדְשִׁי לֹא נִמְוָת; יְהוּדָה לְמִשְׁפַּחַתְּ, וְצִיר לְהוֹיֹת יִתְּנֶה

20 «Ոչ ապաքին դո՛ւ ես **ի սկզբանէ** Տէր Աստուած մեր» (Ամբ. Ա. 12) - փետնում ենք, որ գրաբարը պահել է հունարենի **ի սկզբանէ** բառը երկու փուլում էլ՝ թե Ամբ. Ա. 12-ում, և թե Միքիա Ե. 2-ում:

ցանկացել են ասել մարգարեները Մեսիայի համար՝ Նրան դուրս դնելով ժամանակից, այսինքն՝ շեշտել են, որ Նա հավիտյանական է, սրբազան է:

Եզրակացություն

Վերանայելով երկու համարները (Նովի. ԺԴ. 14, Միքիա Ե. 2), որոնց բրուկլինյան թարգմանիչները ՆԱԹ-ում ներկայացնում են իրենց դավանանքի համեմատ եւ պնդում, թե այնպեղ Մեսիան՝Նիսուս, ներկայացված է Նորից փոքր, սրբազան: Մինչդեռ բնագրային մակերեսային բնութագրումն անգամ ցույց է տալիս, որ երկու բնագրերն էլ (եբրայերենն ու LXX հունարենը)²¹ բառացի համաձայն են իրար եւ բովանդակային առումով՝ հավասարազոր: LXX թարգմանիչները ապրել են այն ժամանակ, երբ քրիստոնեությունը տարածվել էր, եւ այդ թարգմանությունը, այդ առումով, ավելի վավերական է, ճիշտ է արտահայտում եբրայերենը: Այն ցույց է տալիս, թե ինչպես պետք է թարգմանել, մինչ ՆԱԹ-ը ցույց է տալիս, թե ինչպես պետք է թարգմանել: Իսկ ինչ վերաբերում է Մեսիայի՝ Նիսուսի Աստված լինել-չլինելուն, ապա այդ իսկ համարները ցույց են տալիս Մեսիայի՝ Աստված լինելը, Նորը հավասար լինելը եւ ոչ հակառակը: Հակառակ դեպքում ՆԱԹ-ի թարգմանիչները չէին աղավաղի թարգմանությունը, կթողնեին նույնը, ինչ եբրայերենն է եւ հունարենը, եւ կավելացնեին՝ նաեւ գրաբարը:

(Շաբունակելի)

ՂԵԻՈՆԴ-ՔՆՆԱԿԱՆ ՄԱՅԻՆԱԿԱՆ

²¹ Նաեւ գրաբարը: